



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. երկրորդ կիսամյակում /վերլուծություն/

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 67659 գործարքներ, որոնց քանակը 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 29.1%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 23.3%-ով:

2005թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 22618 օտարման գործարքների 86.7%-ը կազմել են առուվաճառքները, 12.8%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 40.8%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. երկրորդ կիսամյակում, 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 4.1%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 12.8%-ով: 2005թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 7534 առուվաճառքի գործարքների 63.4%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.6%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 8.5%-ով:

2005թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երկրորդ կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		երկրորդ կիսամյակ 2004թ.	երկրորդ կիսամյակ 2005թ.	առաջին կիսամյակ 2005թ.
Կենտրոն	157300.0-435900.0	246800.0	311800.0	265500.0
Արաբկիր	112350.0-314600.0	196300.0	252600.0	217600.0
Քանաքեռ-Զեյթուն	89900.0-224700.0	119800.0	154300.0	132900.0
Նոր-Նորք	89900.0-188700.0	104600.0	148800.0	121000.0
Ավան	80900.0-157300.0	100200.0	131100.0	114400.0
Էրեբունի	71900.0-179800.0	96200.0	130400.0	107000.0
Շենգավիթ	71900.0-202200.0	114600.0	157800.0	130000.0
Դավթաշեն	89900.0-202200.0	123100.0	159400.0	134400.0
Աջափնյակ	89900.0-202200.0	112600.0	149900.0	126700.0
Մալաթիա-Սեբաստիա	89900.0-202200.0	111700.0	144900.0	123800.0
Նուբարաշեն	53900.0-112350.0	44400.0	82300.0	56600.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	53900.0-435900.0	124600.0	165800.0	139000.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. երկրորդ կիսամյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների կիսամյակային աճը կազմել է 19.3%, իսկ տարեկան աճը՝ 33.1%:

2005թ. երկրորդ կիսամյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն, համապատասխանաբար, կայունացման և աճման միտումներ:

2005թ. երկրորդ կիսամյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2715 բնակարաններ, որոնց քանակը 2004թ.

երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 3.0%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 15.9%-ով :

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երկրորդ կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			երկրորդ կիսամյակ 2004թ.	երկրորդ կիսամյակ 2005թ.	առաջին կիսամյակ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	36400.0-72700.0	35200.0	49100.0	40500.0
	Ապարան	13600.0-27300.0	19100.0	22400.0	19500.0
	Թալին	11400.0-25000.0	16300.0	21400.0	17700.0
Արարատ	Արտաշատ	25000.0-50000.0	29500.0	38200.0	32500.0
	Մասիս	36400.0-68200.0	31900.0	49800.0	35700.0
	Վեդի	22700.0-45400.0	21700.0	32300.0	20500.0
	Արարատ	20400.0-45400.0	21100.0	35700.0	23200.0
Արմավիր	Վաղարշապատ	50000.0-95400.0	52700.0	73000.0	62400.0
	Արմավիր	27300.0-59100.0	32800.0	43500.0	37300.0
	Մեծամոր	18200.0-36400.0	16600.0	24100.0	18800.0
Գեղարքունիք	Սևան	18200.0-40900.0	18000.0	29300.0	20200.0
	Գավառ	13600.0-29500.0	17200.0	21400.0	17300.0
	Մարտունի	22700.0-68200.0	18400.0	35100.0	19500.0
	Վարդենիս	9100.0-25000.0	9000.0	18600.0	9800.0
	Ճամբարակ	5900.0-20400.0	9100.0	10300.0	8900.0
Լոռի	Վանաձոր	27300.0-47700.0	32600.0	39800.0	33900.0
	Ստեփանավան	15900.0-29500.0	18700.0	22100.0	19300.0
	Սյիտակ	18200.0-45400.0	21200.0	25800.0	22700.0
	Այվերդի	9100.0-22700.0	13400.0	17700.0	13900.0
	Տաշիր	11400.0-25000.0	13000.0	19700.0	15300.0
	Թումանյան	4100.0-11400.0	5000.0	5300.0	5100.0
	Շամլուղ	2300.0-8400.0	2800.0	2800.0	2800.0
	Ախթալա	6800.0-16100.0	10300.0	10400.0	10400.0
Կոտայք	Աբովյան	45400.0-90900.0	52900.0	75900.0	61100.0
	Նոր Հաճն	40900.0-63600.0	37100.0	54900.0	42100.0
	Բյուրեղավան	22700.0-50000.0	24200.0	35100.0	28100.0
	Եղվարդ	31800.0-59100.0	26800.0	46300.0	33900.0
	Հրազդան	20400.0-40900.0	22500.0	28000.0	25700.0
	Ծաղկաձոր	18200.0-68200.0	45200.0	55200.0	48100.0
	Չարենցավան	25000.0-38600.0	21500.0	34600.0	25300.0
Շիրակ	Գյումրի	27300.0-54500.0	38800.0	41500.0	37900.0
	Արթիկ	15900.0-31800.0	16000.0	24900.0	17600.0
	Մարալիկ	8200.0-31800.0	14500.0	21300.0	14700.0
Սյունիք	Գորիս	20400.0-59100.0	19500.0	43600.0	27100.0
	Կապան	22700.0-36400.0	17400.0	31200.0	21600.0
	Միսիան	18200.0-40900.0	18400.0	26700.0	21200.0
	Մեղրի	13600.0-34100.0	13100.0	21900.0	15900.0
	Ագարակ	9100.0-27300.0	12800.0	17500.0	13900.0
Քաջարան	9100.0-22700.0	10100.0	16700.0	10900.0	

	Դաստակերտ	4500.0-11400.0	6700.0	6400.0	6400.0
Վայոց Ձոր	Վայք	13600.0-36400.0	20600.0	28700.0	21700.0
	Եղեգնաձոր	25000.0-59100.0	26800.0	41100.0	31500.0
	Ջերմուկ	36400.0-81800.0	28400.0	44500.0	34600.0
Տավուշ	Դիլիջան	18200.0-50000.0	22500.0	32600.0	25700.0
	Իջևան	27300.0-72700.0	27800.0	37100.0	30800.0
	Բերդ	18200.0-45400.0	17400.0	25400.0	20900.0
	Նոյեմբերյան	9100.0-22700.0	14100.0	14100.0	12800.0

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների կիսամյակային աճը կազմել է 27.8%, տարեկան աճը՝ 42.4%:

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2819 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 708, մյուս մարզերում միասին վերցրած՝ 2111: 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 4.8%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 6.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 4.1%-ով: 2005թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 24.7%-ով, ընդ որում Երևանում՝ 18.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 27.0%-ով:

2005թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երկրորդ կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		երկրորդ կիսամյակ 2004թ.	երկրորդ կիսամյակ 2005թ.	առաջին կիսամյակ 2005թ.
Կենտրոն	136300.0-908800.0	248600.0	332300.0	280100.0
Արաբկիր	90900.0-454400.0	200300.0	266300.0	222500.0
Քանաքեռ-Զեյթուն	68200.0-272600.0	120500.0	159100.0	135000.0
Նորք-Մարաշ	90900.0-454400.0	174800.0	180900.0	169300.0
Ավան	90900.0-363500.0	101100.0	136700.0	116300.0
Էրեբունի	68200.0-227200.0	97700.0	135600.0	108600.0
Շենգավիթ	68200.0-204500.0	115400.0	161700.0	131500.0
Դավթաշեն	90900.0-409000.0	124000.0	164400.0	137700.0
Աջափնյակ	68200.0-272600.0	113600.0	155600.0	129200.0
Մալաթիա-Սեբաստիա	68200.0-409000.0	112800.0	148600.0	126400.0
Նուբարաշեն	36400.0-113600.0	45000.0	87500.0	58400.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	36400.0-908800.0	132200.0	175300.0	146800.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ կիսամյակային աճը կազմել է 19.4%, տարեկանը 32.6%:

2005թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն կայունացման միտում:

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երկրորդ կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			երկրորդ կիսամյակ 2004թ.	երկրորդ կիսամյակ 2005թ.	առաջին կիսամյակ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	27300.0-81800.0	44100.0	50400.0	44000.0
	Ապարան	13600.0-36400.0	19900.0	23900.0	20300.0
	Թալին	13600.0-36400.0	17600.0	23000.0	18600.0
Արարատ	Արտաշատ	22700.0-50000.0	31700.0	39400.0	33300.0
	Մասիս	22700.0-68200.0	32800.0	51200.0	36500.0
	Վեդի	13600.0-40900.0	24600.0	33500.0	23100.0
	Արարատ	13600.0-45400.0	22500.0	37000.0	24300.0
Արմավիր	Վաղարշապատ	36400.0-81800.0	53700.0	74300.0	63200.0
	Արմավիր	22700.0-59100.0	33400.0	45200.0	38100.0
Գեղարքունիք	Սևան	9100.0-40900.0	20500.0	33000.0	21700.0
	Գավառ	9100.0-36400.0	20300.0	22900.0	19200.0
	Մարտունի	13600.0-45400.0	20200.0	37300.0	21200.0
	Վարդենիս	9100.0-31800.0	11000.0	20800.0	11500.0
	Ճամբարակ	4500.0-22700.0	10900.0	11700.0	10800.0
Լոռի	Վանաձոր	22700.0-50000.0	35800.0	41000.0	35200.0
	Ստեփանավան	13600.0-36400.0	22600.0	26800.0	25200.0
	Սպիտակ	13600.0-36400.0	22700.0	27300.0	23800.0
	Ալավերդի	9100.0-31800.0	14500.0	18900.0	15200.0
	Տաշիր	9100.0-31800.0	13800.0	21000.0	16500.0
	Թումանյան	4500.0-18200.0	5500.0	6700.0	6200.0
	Շամլուղ	2300.0-13600.0	3900.0	4200.0	4000.0
	Ախթալա	9100.0-22700.0	11000.0	11900.0	11100.0
Կոտայք	Աբովյան	31800.0-90900.0	54000.0	79300.0	62000.0
	Նոր Հաճն	18200.0-68200.0	37800.0	56500.0	43400.0
	Բյուրեղավան	18200.0-45400.0	24700.0	36400.0	28900.0
	Եղվարդ	22700.0-63600.0	27500.0	48700.0	34700.0
	Հրազդան	18200.0-40900.0	23300.0	30200.0	27600.0
	Ծաղկաձոր	31800.0-68200.0	48500.0	56800.0	51400.0
	Չարենցավան	18200.0-45400.0	21900.0	37200.0	26700.0
Շիրակ	Գյումրի	27300.0-59100.0	46700.0	43800.0	43200.0
	Արթիկ	9100.0-40900.0	16900.0	27000.0	18500.0
	Մարալիկ	13600.0-36400.0	15100.0	23300.0	15400.0
Սյունիք	Գորիս	18200.0-59100.0	20400.0	44700.0	27900.0

	Կապան	13600.0-40900.0	18300.0	33300.0	22600.0
	Միսիան	9100.0-40900.0	19100.0	28100.0	21600.0
	Մեղրի	13600.0-36400.0	14500.0	23400.0	16900.0
	Ագարակ	9100.0-36400.0	14400.0	19600.0	15000.0
	Դաստակերտ	4500.0-18200.0	7400.0	8500.0	7600.0
Վայոց Ձոր	Վայք	9100.0-36400.0	21300.0	30100.0	22900.0
	Եղեգնաձոր	18200.0-59100.0	27200.0	43600.0	32300.0
	Ջերմուկ	13600.0-40900.0	22500.0	30400.0	24600.0
Տավուշ	Դիլիջան	13600.0-45400.0	26200.0	34200.0	30000.0
	Իջևան	18200.0-45400.0	28500.0	38500.0	31600.0
	Բերդ	9100.0-40900.0	17700.0	26400.0	21700.0
	Նոյեմբերյան	9100.0-31800.0	15800.0	14900.0	14400.0

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ կիսամյակային աճը կազմել է 26.8%, տարեկանը՝ 38.9%:

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Ընդհանուր առմամբ, 2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարվել են 8916.16 հա /այդ թվում՝ 159.98 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 8336.87 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 8634.45 հա /այդ թվում 155.09 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 8104.70 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել է նաև 47 միավոր /37.91 հա/ արդյունաբերական օբյեկտների հող, ինչպես նաև 19 միավոր /15.26 հա/ հատուկ պահպանվող տարածքի հող:

Օտարված 264.56 հա /այդ թվում՝ 3.88 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 217.12 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 17.15 հա /այդ թվում՝ 1.01 հա Երևանում/, որից 15.05 հա գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 5390.20 հա, որից 5335.62 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Ստորև ներկայացվում է 2005թ. երկրորդ կիսամյակում մարզերում հողերի առուվաճառքի քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>						<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	160	50.20	96	37.01	0	0.00	453	46.50	81	20.89

Արագածոտն	56	459.35	4	0.49	13	0.15	280	233.21	215	21.47	4	0.29
Արարատ	165	566.37	267	26.68	42	2.14	551	398.29	362	35.35	4	0.06
Արմավիր	359	3171.82	7	0.92	28	0.87	630	2163.80	290	28.14	4	0.16
Գեղարքունիք	29	71.29	26	2.67	9	9.55	62	63.52	47	6.34	3	0.95
Լոռի	0	0.00	3	0.12	5	0.36	106	95.02	36	3.94	4	0.04
Վոտայք	62	118.18	29	2.91	27	42.47	485	224.33	808	103.56	22	9.61
Շիրակ	77	33.26	71	2.66	40	1.05	109	116.35	59	4.46	1	0.01
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	71	107.17	7	0.59	1	0.04
Վայոց Ձոր	16	162.40	0	0.00	10	3.54	33	18.63	17	2.65	0	0.00
Տավուշ	14	17.03	18	1.80	5	4.02	92	84.67	17	1.92	0	0.00
Ընդամենը	778	4599.70	585	88.45	275	101.16	2419	3504.99	2311	254.92	124	32.05

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են 6558 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ. երկրորդ կիսամյակում՝ 6643/, այդ թվում 3197-ը՝ գյուղատնտեսական նշանակության /3368/, 3295-ը՝ բնակավայրերի /3251/, 47-ը՝ արդյունաբերական օբյեկտների /23/, 19-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ /1/:

2005թ. երկրորդ կիսամյակում հողերի առուվաճառքներից 1503-ը միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ. երկրորդ կիսամյակում՝ 1847/, այդ թվում 157-ը՝ /54.59 հա/ Երևանում /441/, իսկ 1346-ը՝ /4595.49 հա/ մյուս մարզերում /1406/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 764 միավորը /4537.77 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /844/, 538-ը՝ /81.62 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /889/, 177-ը՝ /24.55 հա/ հասարակական կառուցապատման /107/, 16-ը՝ /0.64 հա/ արդյունաբերական օբյեկտների /7/ և 8-ը՝ /5.50 հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրված 3197 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 764-ը իրականացվել են աճուրդների, 84-ը՝ դատարանի վճիռների և 14-ը՝ ուղղակի վաճառքներ միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	52	457.48	25.2	3334.1	214.7	215	159.88	354.4	6741.0	1978.7
Ապարան						17	8.85	88.6	764.0	298.7
Թալին	3	1.64	44.9	51.7	47.2	38	51.12	88.6	755.0	255.7
Ծաղկահովիտ						10	13.36	75.3	943.7	136.6
Արարատի մարզ										
Արտաշատ	27	14.90	108.5	10137.7	1557.8	225	121.46	327.8	5392.8	1090.0

Մասիս	37	50.82	33.2	1931.5	470.2	120	74.32	177.2	6741.0	1338.2
Վեդի	97	450.92	19.9	2250.3	289.1	201	196.04	199.4	4494.0	799.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	53	182.66	8.9	930.3	312.3	222	197.00	288.0	4044.6	677.3
Բաղրամյան	194	2756.90	19.9	595.3	104.9	135	1798.94	88.6	674.1	396.8
Վաղարշապատ	112	232.26	11.4	5461.9	445.8	219	121.81	434.1	8988.0	1154.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						5	1.43	186.1	494.3	296.4
Ճամբարակ	27	66.89	133.7	949.7	363.6	5	6.40	44.3	539.3	116.2
Մարտունի						24	5.94	44.3	1797.6	425.5
Սևան						1	0.10	44.3	449.4	174.2
Վարդենիս						23	34.26	26.6	530.3	170.5
Լոռու մարզ										
Ալավերդի						24	11.01	159.5	2471.7	334.1
Գուգարք						5	4.67	221.5	2696.4	848.6
Սպիտակ						3	0.30	221.5	1483.0	470.7
Ստեփանավան						29	23.90	79.7	2247.0	273.8
Տաշիր						31	31.76	44.3	449.4	174.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	17	24.00	125.8	2269.5	660.6	269	100.02	265.8	11235.0	2747.3
Եղվարդ	3	40.00	120.4	122.2	121.3	181	94.46	168.3	11235.0	1886.5
Հրազդան	42	54.18	104.5	388.5	238.5	33	29.09	110.8	2696.4	646.5
Շիրակի մարզ										
Այսուրյան	2	1.22	1163.9	1650.2	1407.1	59	52.90	243.7	1685.3	359.1
Ամասիա						19	27.14	35.4	235.9	85.2
Անի						21	14.96	106.3	359.5	182.6
Աշոցք						3	14.97	26.6	112.4	93.5
Արթիկ	68	24.47	105.4	1321.2	640.6	7	6.39	62.0	1078.6	151.7
Սյունիքի մարզ										
Գորիս						27	18.78	88.6	719.0	285.2
Կապան						5	4.14	53.2	898.8	205.2
Մեղրի						3	0.49	177.2	1905.5	407.3
Միսիան						36	83.77	39.9	674.1	170.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	8	139.80	33.7	202.2	142.0	26	11.66	115.2	2696.4	1160.9
Վայք	8	22.60	24.7	224.7	94.4	6	6.82	53.2	1528.0	452.6
Տավուշի մարզ										
Բերդ						15	5.86	44.3	898.8	307.8
Իջևան	14	17.03	316.7	685.3	418.0	12	8.46	234.8	1797.6	741.5
Նոյեմբերյան						61	68.61	44.3	3748.0	384.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 2283 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 419-ը իրականացվել են աճուրդների, 6-ը՝ ուղղակի վաճառքների և 7-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի /նախկին շրջան/ անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների	Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների
---------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------

	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	1220.0	175.3	175.3	175.3	203	195514.0	110.8	3595.2	1928.9
Ապարան						5	8680.0	110.8	629.2	158.4
Թային	3	3718.0	110.1	116.9	115.7	4	6800.0	44.3	359.5	67.9
Ծաղկահովիտ						1	520.0	44.3	359.5	63.4
Արարատի մարզ										
Արտաշատ	160	164192.0	37.7	539.3	274.6	79	99778.6	132.9	2696.4	709.1
Մասիս	62	47807.0	252.5	1897.0	635.5	197	167705.0	132.9	8988.0	884.9
Վեդի	44	54630.0	47.2	413.4	323.9	83	82627.0	110.8	988.7	514.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	7	9200.0	92.2	159.0	149.8	89	103084.8	132.9	2247.0	833.6
Բաղրամյան						8	9600.0	79.7	269.6	104.8
Վաղարշապատ						190	166204.0	132.9	4494.0	1167.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						9	9717.0	132.9	898.8	301.7
Ճամբարակ	16	16150.0	85.4	154.5	104.9			44.3	134.8	72.4
Մարտունի	6	6400.0	57.6	115.2	78.0	14	18980.0	88.6	449.4	150.9
Սևան	4	4120.0	344.8	680.8	513.3	3	2740.0	88.6	898.8	117.7
Վարդենիս						21	31990.0	44.3	224.7	67.2
Լոռու մարզ										
Ալավերդի						3	3760.0	66.5	269.6	95.0
Գուգարք						20	19591.0	66.5	2336.9	463.2
Սյիտակ						8	10280.0	62.0	449.4	99.6
Ստեփանավան	3	1200.0	276.4	276.4	276.4	3	2150.0	44.3	269.6	72.4
Տաշիր								44.3	134.8	61.1
Կոտայքի մարզ										
Արուսյան	28	28450.0	276.4	820.2	638.1	342	308776.0	132.9	6741.0	1424.9
Եղվարդ						380	640360.0	132.9	6741.0	1554.7
Հրազդան						79	80870.0	132.9	8988.0	983.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	45	12806.6	175.2	4750.2	1108.9	50	31783.0	110.8	1528.0	261.4
Ամասիա								44.3	134.8	61.1
Անի						4	7400.0	66.5	179.8	83.7
Աշոցք								39.9	134.8	54.3
Արթիկ	25	10899.0	38.2	899.7	290.9	5	5420.0	66.5	921.3	116.9
Սյունիքի մարզ										
Գորիս						3	2840.0	66.5	539.3	198.4
Կապան						1	1000.0	66.5	629.2	185.6
Մեղրի						1	200.0	66.5	404.5	104.1
Սիսիան						2	1890.0	66.5	404.5	117.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						14	21632.0	66.5	1123.5	206.7
Վայք						2	3330.0	75.3	629.2	101.8
Տավուշի մարզ										
Բերդ								44.3	629.2	76.9
Իջևան	15	11250.0	219.3	289.9	234.2	12	14569.0	66.5	1348.2	312.3
Նոյեմբերյան						4	3480.0	44.3	629.2	96.6

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 51 գործարքներ 23.15 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ Արագածոտնի /0.12հա/, 37-ը՝ Արարատի /8.95 հա/, 2-ը՝ Գեղարքունիքի /2.00 հա/, 2-ը՝ Լոռու /1.32հա/, 7-ը՝ Շիրակի /10.61 հա/ և 2-ը՝ Սյունիքի /0.16 հա/ մարզերում:

2005թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6186 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.1%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 40.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 32.5%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 7.3%-ով:

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 243 բնակարանների, 156 անհատական բնակելի տների, 1348 հասարակական, 128 արտադրական նշանակության օբյեկտների, 4291 միավոր հողերի, 20 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Այգետնակի վարձակալության գործարք չի գրանցվել:

2005թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 480 վարձակալության գործարքների քանակը 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 37.9%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 2.6 անգամ:

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում վարձակալվել են 13793.95 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 40.37 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 13150.19 հա կազմում են գյուղատնտեսական /որից 460.00 հա նախկին պահուստային/, 141.32 հա՝ բնակավայրերի, 153.99 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 52.14 հա՝ էներգետիկայի օբյեկտների, 5.15 հա՝ անտառային, 77.43 հա՝ ընդերքի օգտագործման համար նախատեսված, 80.65 հա՝ ջրային, 80.25 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 5.14 հա՝ տրանսպորտի օբյեկտների, 7.30 հա՝ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 3302.33 հա, որից 3201.09 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Իսկ առավել փոքր մակերեսով հողեր են վարձակալվել Տավուշի մարզում՝ 223.38 հա, որից 202.28 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 6285.30 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. երկրորդ կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	20	1586.00	335	1053.84
Արարատ	19	704.00	193	1502.47
Արմավիր	0	0.00	68	288.87
Գեղարքունիք	42	2212.70	433	988.39
Լոռի	0	0.00	115	406.84

Կոտայք	1	50.00	204	256.92
Շիրակ	7	702.00	277	1312.99
Սյունիք	9	955.00	56	483.20
Վայոց Ձոր	2	75.60	91	369.10
Տավուշ	0	0.00	57	202.28
Ընդամենը	100	6285.30	1829	6864.90

2005թ. երկրորդ կիսամյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5383 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.0%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 28.2%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 26.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /17.4%/, առանձնատների /17.0%/ և հողերի /14.8%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2782 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 31.0%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 35.4%-ով:

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 1100.46 հա մակերեսով հողեր /այդ թվում՝ 67.19 հա Երևանում/, որից 992.41 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 578.18 հա, որից 576.86 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2005թ. երկրորդ կիսամյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 37 և 118 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը աճել է 21.1%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 9.2%-ով: 2005թ. երկրորդ կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 29.0%:

2005թ. երկրորդ կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2005թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 10266 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 16.4%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 8.4%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.2%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /52.2%/:

Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն